Ճառիս ավարտին և տառիս վերջանալուն Քրիստոսին փառք հավիտյանս:

Այսօր, երբ պատմությունս ավարտեցինք 1148 (1699) թվի մայիսի 30-ին հավի ձվի չափ կարկուտ եկավ և բոլոր բույսերը ջարդեց:

ԳԼՈՒԽ ԿԷ
ՀԱՐՅՈՒՄ ԵՎ ԻՄ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ

Ա հարց.- Մի մարդ ուներ ութ լիտր ձեթ. երկու մարդ եկան այն գնելու. մեկ մարդը ուներ երեք լտրանոց աման, մյուսը ուներ հինգ լտրանոց աման: Այժմ ութ լիտր ձեթ է այդ չափերով կիսիր այնպես, որ երկուսին էլ 4-ական լիտր լինի:

Լուծում.- Նախ երեք լտրանոցը կլցնեմ կթափեմ հինգ լտրանոցի մեջ, դարձյալ երեք լտրանոցը կլցնեմ (կթափեմ հինգ լտրանոցի մեջ), որ երկու լիտրը գնա, երեք լտրանոցի մեջ մնա մի լիտր: Այն հինգ լտրանոցում կա 4 լիտր, այդ կթափեմ առաջին ամանի մեջ և այն մեկ լիտրը, որ երեք լտրանոցում է կլցնեմ հինգ լտրանոցի մեջ: Դարձյալ կլցնեմ երեք լտրանոցը և շուռ կտամ հինգ լտրանոցի մեջ մի լիտրի վրա, որ լինի 4 լիտր, կմնա այնտեղ չորս լիտր:

Բ հարց.- Մի գայլ, մի գառ և մի խուրձ խոտ: Մեկ-մեկ անցկացրու գետը, որ ոչ գայլը գառը ուտի, ոչ գառը՝ խոտը:

Լուծում.- Նախ կանցկացնեմ գառը, ապա խոտը կտանեմ գառը հետ կբերեմ, գայլը կտանեմ, ապա կգամ գառը կտանեմ:

Գ հարց.- Տեր Պետրոսը, տեր Պողոսը և տեր Անդրեասը երեք կանոն սաղմոս ասացին և հետո տեսան, որ երկու կանոն էին ասել. այդ ինչպե՞ս է:

Լուծում.- Առաջ տեր Պետրոսն ու տեր Պողոսը ասացին մի կանոն և ապա տեր Պողոսն ու տեր Անդրեասը ասացին, որ բոլորին լինում է երկու կանոն՝ միմյանց հավասար:

Դ հարց.- Երեսուն ձի կապիր ինը ցցից, որ ավել կամ պակաս չստացվի:

Լուծում.- Ամեն ցցից կկապեմ ինը* ձի, որ լինի քսանյոթ ձի, մնաց երեք ձի: Ամեն մի ձիու գլուխը կկապեմ երեք պախուրց, որ

*Կարդա երեք:

յուրաքանչյուր առանձին պախուրց կկապեմ մի ցցից, որ լինի հավասար:

Ե հարց.- Կիրակոսը, Սարգիսն ու Մարկոսը մի ձիով երեք օր ճանապարհ գնացին, հետո տեսան, որ ամեն երկու օր հեծել էին. այդ ինչպե՞ս է եղել:

Լուծում.- Նախ Կիրակոսն ու Սարգիսը հեծան, ապա Կիրակոսն ու Մարկոսը, հետո Մարկոսն ու Սարգիսը, որ ամենը լինում է երկու օր:

Զ հարց.- Երեք եղբայր ունեին երեսուն ոչխար, տասը ծնեցին երեքական, տասը երկուական, տասը մեկական: Այժմ այն հավասար բաժանիր երեք եղբայրներին, բայց գառը մորից չբաժանես:

Լուծում.-Հինգ երեքական ծնած և հինգ մեկական ծնած կտամ մի եղբորը, նույնպես հինգ երեքածին, հինգ միածին կտամ մյուս եղբորը, իսկ երկուածինները կտամ երրորդ եղբորը, որ յուրաքանչյուրը ունենա տասը ոչխար, քսան գառ հավասար:

Է հարց.- Մի խոջա հարյուր դրամ տվեց ծառային, թե գնա հարյուր թռչուն բեր: Ծառան գնաց, գնեց հինգ բադ, տվեց հինգ դրամ, գնեց հինգ ճնճղուկ տվեց մեկ դրամ, մեկ՝ հավ մեկական դրամ: Այժմ ասա, թե քանիսն են բադերը, հավերը և կամ քանի ճնճղուկները:

Լուծում.-Մի բադ, որ հինգ դրամ է, հինգ ճնճղուկը մեկ դրամ, այդ արեց վեց դրամ, վեց թռչուն: Գնեց 94 հավ, դա անում է 94 դրամ, որ անում է 100 թռչուն, 100 դրամ, լավ իմացիր:

Ը հարց.- Մի երամ թռչուններ նստած էին մի ծառի, մի այլ թռչուն եկավ և ասաց՝ բարև ձեզ հարյուր թռչուններ: Նրանք ասացին՝ մենք հարյուր չենք, որովհետև որքան մենք ենք, մեր չափ էլ լինի, մեր կեսի չափ էլ, կեսի կեսի չափ էլ, մեկ էլ դու գաս, ապա կլինենք հարյուր: Այժմ երամում քանի թռչուն են եղել:

Լուծում.-Երամում երեսունվեց են եղել, քանզի երեսունվեցը կանի յոթանասուներկու, երեսունվեցի կեսը՝ տասնութ, որ անում է իննսուն, տասնութի կեսը անում է ինը, եղավ իննսունինը, մեկն էլ լինում է հարյուր:

Թ հարց.- Մի քանի թռչուն նստած էին մի տեղում, մի քանի այլ թռչուններ եկան և ասացին՝ թող ձեզնից մեկը գա մեզ մոտ, մենք էլ ձեր չափ լինենք: Նրանք ասացին՝ ոչ, թող ձեզնից մեկը գա մեզ